# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԱԼԵՔՍԻ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻՆ

Խոր վշտով տեղեկացանք Մեր սիրեցյալ եղբոր՝ Ալեքսի Բ Պատրիարքի անժամանակ և անսպասելի մահվան մասին:

Աստված կանչեց նրան Իր մոտ՝ բնակեցնելու Իր հոտի քաջ և բարի հովիվների կողքին: Մեր սրտերը, սակայն, վշտացած են նրա հետ բաժանումից:

Հանուն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատավոր ժողովրդի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եկեղեցական դասի՝ Մեր վշտակցությունն ու սրտակցությունն ենք բերում Ռուս Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Սրբազան Սինոդին, ողջ հոգևոր դասին, Ռուսաստանի Դաշնության պետական այրերին և բարեպաշտ ժողովրդին:

Ռուս Եկեղեցին և Քրիստոնյա աշխարհը կորցրեցին մեծագործ Հովվապետի, ով երկար տարիներ խոնարհ հոգով նվիրյալ ծառայություն է մատուցել Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելությանը:

Հոգելույս Ալեքսի Բ Պատրիարքը հոգու անհուն կորովով և իմաստությամբ հովվեց Ռուս Եկեղեցին խորհրդային դժվարին տարիներին: Նա ամեն ջանք գործադրեց Եկեղեցու զորացման և զարթոնքի համար, երբ խորհրդային կարգերի փլուզումով հնարավորությունն ստեղծվեց ազատորեն գործելու և քարոզելու: Նրա հովվապետությամբ կրկին իր փայլով դրսևորվեց ռուս ժողովրդի հավատավոր հոգու ուժը՝ արտահայտվելով նորակառույց եկեղեցիներով, քրիստոնեական ճանաչողության զորացումով և Ռուս Եկեղեցու դարավոր ավանդների վերածաղկումով:

Ալեքսի Բ Պատրիարքը իր կարևոր և գնահատելի ներդրումն ունի նոր Ռուսաստանի կերտման, նրա պետականության ամրապնդման և խաղաղ ու ազատ կյանքի կառուցման գործում:

Լուսահոգի Պատրիարքը ապրեց ուրախությունն ու մխիթարությունը Ռուս Եկեղեցու վերամիավորման, որն իր բարի արգասիքները պիտի պարգևի Ռուս Եկեղեցու առավել զորացմանը: Ալեքսի Բ Պատրիարքի ջանքերով Ռուս Եկեղեցին նաև իր մեծ ավանդն է բերել միջեկեղեցական և միջկրոնական կյանքում, աշխարհում խաղաղության ու ապահովության հաստատմանը: Մենք միշտ երախտագիտությամբ պիտի անդրադառնանք նրա գործադրած միջնորդական ջանքերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ:

Հոգու մխիթարությամբ ենք անդրադառնում, որ միշտ ջերմ են եղել մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտել նաև մեր պաշտոնական փոխայցելություններում և մտերմիկ հանդիպումներում: Մենք միշտ քաղցրությամբ պիտի կրենք մեր հոգում այդ հանդիպումների հուշը, նրա անհուն սերը, հայրական խնամքն ու հոգատարությունը Ռուսաստանի Դաշնության օրհնյալ հողում ապրող մեր ժողովրդի զավակների հանդեպ:

Աղոթում ենք առ Աստված, որ Իր երկնային երանական բարձունքներում լույսերի մեջ ընդունի արդար հոգին երանաշնորհ Ալեքսի Պատրիարքի և Սուրբ Հոգու մխիթարության շնորհները պարգևի Ռուս Ուղղափառ Սուրբ Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին և հավատավոր հոտին:

*«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի ... Եւ հանգուցէ զնա Տէր ի լոյս երեսաց աստուածութեան Իւրոյ. Ամէն»:*